Մայիս 26-ին կառավարությունը որոշեց բանալ Կարս—Բաթում խճուղին և պարէնի փոխադրության գործը կազմակերպել այդ ճանապարհով։ Գործի ղեկավարությունը յանձնեց Գ. Խատիսեանին, որին յաջողեց հաղորդակցություն հաստատել Բաթումի ու Կարսի միջև և որոշ քանակությամբ ալիւր էլ տեղափոխել։ Այնուհետև ծայր տուած հակավրացական շարժումները, սակայն, արգելք եղան սկսած գործի շարունակության։

Օգոստ. 25-ին քննության առնուեց ժողովրդական տնտեսության նախարարություն հիմնելու ծրագիրը և որոշուեց երկրի վերաշինության վերաբերող բովանդակ աշխատանքը կենտրոնացնել մի հիմնարկության մէջ։

Հոկտ. 17-ին Խորհրդարանը 5 միլիոն ռուբլի վարկ բացեց Հայաստանի Կոօպերատիւների Միութեան։

Նոյն հոկտեմբերին արդէն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչև Բասրա, Թաշկենդ ու Հաշտարխան։

Կրթական-մշակութային պահանջների համար ևս ձեռք առնուեցին լուրջ միջոցներ. մայիս 30-ին կառավարությունը որոշեց մինչև յունիս 15 պարպել բոլոր դպրոցական շէնքերը, նորոգել և պատրաստել ուսումնական նոր տարուայ համար և տարրական ու միջնակարգ դպրոցներին յուլ.-դեկտ. շրջանի համար յատկացրեց 10,970,925ռ.։ Տարուայ վերջը Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Փամբակ-Լոռիի, Իջևանի և Նոր-Բայազէտի ու Զանգեզուրի գաւառներում կար 431 տարրական դպրոց 1096 ուսուցչով և 38,015 աշակերտով։ Միջնակարգ դպրոցների թիւն էր 20, որոնց մէջ կար 288 ուսուցիչ և 5162 աշակերտ։

Մայիս 16-ին որոշուեց բանալ համալսարան։ Յուլ. 15-ին հիմնուեցին յուշարձանների պահպանման և արուեստի հովանաւորության բաժինները։

Մայիս 25-ին Երևանում բացուեց Հայ Արուեստագէտների Միութեան անդրանիկ պատկերահանդէսը Հայաստանում, որ կազմակերպուած էր հանրային կրթության և արուեստի նախարարի հովանաւորության տակ։ Ցուցադրուած էին բազմաթիւ նկարներ՝ Գ. Բաշինջաղեանի, Ե. Թադէոսեանի, Մ. Սարեանի, Ս. Խաչատրեանի, Ախիկեանի և շատ ուրիշների։ Պատկերահանդէսը մեծ հետաքրքրություն առաջ բերեց հասարակության մէջ. կառավարությունը գնեց 100,000ռ. նկարներ պետական թանգարանի համար։ Պատկերների գնումներ կատարեցին և Հայկօօպը, Երևանի քաղաքային ինքնավարությունը և այլն։

Հայ Գրողների Միութեան նախագահ Ց. Թումանեանի դիմումի վրա. յուլ. 9-ին կառավարությունը յատկացրեց 100,000ռ., որպէս նպաստ հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախօսներին։ Հայ Գրողների Միութեան վարչությունը այդ գումարը բաժանեց 8 ամենից հեղինակաւոր ու կարիքաւոր գրողներին։